Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ << ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի պատմության (22 դասաժամ), կերպարվեստի (2դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին ներկայանում է՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է՝ (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ)
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետություններում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունում են նոյեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 14 : 00-ից 15 : 00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 24-ին՝ ժամը 14 : ին, ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք.Արարատ, Շահումյան 62/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-30–17 կամ (093) 81-49-21 հեռախոսահամարներով: